ԵՐԵԽԱՅԻ ՈՐՈՆՈՒՄ

Գտնել | Հաստատել ինքնությունը | Գնահատել

Ինչ է Երեխայի որոնումը

Երեխայի որոնումը իրականացնում է այն երեխաների և երիտասարդների որոնման, ինքնության հաստատման և գնահատման գործընթացը, ովքեր իրավասություն ունեն ստանալ իրենց համար նախատեսված անվճար հատուկ կրթական ծառայություններ: Լոս Անջելեսի միասնական դպրոցական շրջանի տարածքում ապրող 0-22 տարեկան երեխաներն ու պատանիները, ում մոտ կասկածվում է հաշմադամություն, կարող են ուղեգրվել գնահատման՝նրանց հատուկ կրթական ծառայությունների իրավասությունը որոշելու համար: Սա ներառում է անօթևան, հիպերշարժունություն ունեցող, ներգաղթյալ, նահանգի խնամակալության տակ գտնվող և տնային կրթություն ստացող երեխաներին և պատանիներին: Բացի այդ, ծառայությունից կարող են օգտվել նաև այն երեխաները, ովքեր ապրում են ԼԱՄԴՇ (LAUSD)-ի սահմաններից դուրս, սակայն հաճախում են ԼԱՄԴՇ-ի տարածքում գտնվող մասնավոր դպրոց:

Ում Դիմել

Նախադպրոցական տարիքի երեխաներ

ԼԱՄԴՇ ծրագրում չընդգրկված 0-3 տարեկան և նախադպրոցական տարիքի երեխաների համար կապ հաստատեք ԼԱՄԴՇ-ի Վաղ մանկության հատուկ կրթության ծառայության հետ, զանգահարելով (213) 241-4713:

ԼԱՄԴՇ ծրագրում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների համար (թե՛ վաղ կրթության կենտրոնի ծրագում և թե՛ նախադպրոցական դասարանում) կապվեք ծրագրի կամ այն դպրոցի հետ, որտեղ երեխան գրանցված է:

Դպրոցական տարիքի երեխաներ և ԼԱՄԴՇ (LAUSD)-ի դպրոցներում ընդգրկված պատանիներ

ԼԱՄԴՇ-ում կամ Վիրտուալ ակադեմիայում ընդգրկված դպրոցական տարիքի երեխաների և պատանիների համար դիմեք աշակերտի ԼԱՄԴՇ հաճախման դպրոց:

Դպրոցական տարիքի երեխաներ և մասնավոր դպրոցներում ընդգրկված պատանիներ, տնային կրթություն ստացող աշակերտներ կամ դեռևս ծրագրում չընդգրկված աշակերտներ

5-22 տարեկան դպրոցահասակ երեխաների և պատանիների համար, ովքեր ապրում են ԼԱՄԴՇ տարածքում և հաճախում են մասնավոր դպրոցներ, ինչպես նաև, որևէ դպրոցում չընդգրկված և տնային կրթություն ստացող երեխաների համար դիմեք տվյալ տարածքում գործող ԼԱՄԴՇ (LAUSD) դպրոց: Ծնողները/խնամակալները կարող են գտնել իրենց բնակության տարածքում գործող դպրոցը այս կայքում՝ https://rsi.lausd.net/ResidentSchoolIdentifier/:

ԼԱՄԴՇ-ի տարածքում չբնակվող, սակայն դրա տարածքում գործող մասնավոր դպրոց հաճախող 5-22 տարեկան դպրոցահասակ երեխաների և պատանիների համար դիմեք ԼԱՄԴՇ-ի Հատուկ կրթության բաժնի Ծնողների որոշմամբ հատուկ դպրոց հաճախողների գրասենյակ, (Parentally Placed Private School Office) զանգահարելով (213) 241-8101, կամ այցելեք pppso@lausd.net կայք:

Դպրոցական տարիքի երեխաներ և Չարտերային դպրոցներում ընդգրկված պատանիներ

Չարտերային դպրոցներում ընդգրկված դպրոցական տարիքի երեխաների և պատանիների համար դիմեք աշակերտի հաճախման չարտերային դպրոց:

Աջակցություն

Եթե գնահատման կամ ուղեգրման հարցում աջակցության կարիք ունեք, զանգահարեք (213) 241-6701 հեռախոսահամարով:

(Armenian) Ավելին իմանալու համար այցելեք lausd.org/spedchildfind կայք Վերանայվել է՝ 2024 թ. ապրիլի 8-ին

Եթե այս փաստաթուղթը մուտք գործելու հետ կապված խնդիրներ ունեք՝ էկրանի ընթերցողի համատեղելիության պատճառով, խնդրում ենք կապվել Հատուկ կրթության բաժնի հետ աջակցության համար: